

թեամբքն՝ զանազատութիւն հրեական արինացն, զենամբ գառինն՝ զազատաբերութիւնն Իսրայէլի, որոյ ճշմարիտ գառինն զենամբ փրկելոց էին ամենայն արարածք. ծովուն ճանապարհորդութեամբն՝ զաւազանին զնորածնութիւն. հեղձմունս Եգիպտացւոցն՝ զհնոյ մարդոյն մեռելութիւն. ի Յորդանան ճանապարհորդելոյ ժողովրդեանն պատահումն, ըստ գրելոյ ի կարգին, երկոտասան բղխեցելոցն աղբերցն, եւ եաւթանասուն արմաւենեաց ծառոցն, *[Ընտրեաց, ասէ, Փրկիչն այլ եւս եաւթանասունս, զորս եւ առաքեաց ի բժշկութիւն հիւանդացա]*¹. որոց թեպէտ եւ պտղոցն ճաշակմունք զհամս քաղցրութեան ունէին յինքեանս, այլ անդէն² տնկագործեալ ի տեղւոջն՝ ցուցան աղբերս: 2 Իսկ ելք երկոտասան աղբերացն յորդաբուղիս³ ականց ի բացարձակ տեղիս ծաւալեալ՝ զբազումս ծաւալեալ անդաստանս⁴ ցուցանեն ծաղկալիցս եւ պտղալիցս եւ պտղաբերս. որք զերանելի երկոտասանից առաքելոցն ունէին զկերպարանս. զորոց եւ այսաւր սաղմոսերզն յայտնեաց զճշմարտութիւն, ըստ ասելոյն. *Յեկեղեցիս աւրինեցէք զԱստուած, եւ զՏէր յաղբերացն Իսրայէլի*⁵: 3 Այս յորդաբուղիս աղբերաց շնորի, նման Եդեմեան դրախտին աղբեր, զորմանէ ասէ, *Ելանէր յերկրէ եւ ոռոգանէր զամենայն երեսս երկրի*⁶, ծծեալ սուրբ առաքելոցն ի կուսածին աղբերէ Բանին՝ լցեալ յուռթեցին⁷ զամենայն երեսս երկրի: 4 Ի սոցա քարոզութեան ծովուն՝ մեղք մեռանին, արարածք կենդանանան. Փարաւոն ընկղմի, Իսրայէլ ապրի. ծառայութիւնն սպառի, ազատութիւնն հաստատի. գառն բաշխի, ազինք անմահանան. ճաշակողք գառինն երկնաճանապարհորդք լինին, անճաշակողք ծովասոյգք կորնչին. հեթանոսք իսրայէլանան, սատանայ փառաւոնակերպ ի Յորդանանու⁸ յորձանսն սուզեալ կիզու:

5 «Ո՛ր նոր եւ անպատումն սքանչելեաց գործ: 6 Երեք անարատ մանկունքն՝ զբոց հնոցին ցաւղացուցին, եւ վտակք երկոտասան աղբերցս քարոզութեան՝ զշուրսն մկրտութեան աւազանին հրացուցին: 7 Այլ մի եւ նոյն բարեձեւ Բաբելոնի⁷ հնոցն եւ բաբելացի անաւրինացն բոցանայր. եւ աստ զո-

Ս Ղուկ. Ժ 1, 9

1 Այս ճառում անկիւնաւորների մէջ ենք դնում այն հատուածները, որ համարում ենք ընդմիջարկութիւն՝ իբրեւ մեկնութիւն բնագրի մէջ եղած խօսքերին:

2 ԲԳտ. ունին ծնթ. «Այլազգ ինչ պիտի»:

3 Ձ. աղբերցն յորդաբուղիս

4 Թուի ծարաւեալ անդաստանս

Բ Սաղմ. ԿԷ 27

Գ Ծն. Բ 10

5 ՁԱտ. ուռթեցին

6 Ձ. փարաւոնակերպի յորդանանու

7 Ձ. զմի եւ զնոյն բարեձեւ բաբելովսի